

Շաբաթ, 16 Օգոստոսի երեկոյան, Երեւանի «Հրապարակ» մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Համահայկական 3րդ խաղերու հանդիսաւոր բացումը: Նախքան բացման արարողութիւնը, Գառնիի տաճարին մէջ վառեցաւ Համահայկական խաղերու խորհրդանիշ ջահը, զոր մարզիկներ հերթաբար կրելով հասցուցին «Հրապարակ» մարզադաշտ: Համահայկական 3րդ խաղերուն կը մասնակցին 80 քաղաքներէ 1500 մարզիկներ: Նկատի առնուած են տասը տարբեր մարզաձեւեր: Համահայկական 3րդ խաղերը պիտի աւարտին Օգոստոս 24ին:

ԲՈՆԱԳՐԱՒՈՂ ՈՒՃԵՐՈՒՆ ԵՒ ԱՅԼ ԹԻՐԱԽՆԵՐՈՒ ԴԵՍ 3ԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ

Իրաքի քարիղի մարզին ամէնէն բարձրաստիճան պաշտօնատարը՝ Թամէր Ղատպան, շաբաթավերջին խոստովանած է, թէ քարիղի արտաձուները չի կրնար երաշխաւորել՝ դէպի Թուրքիա քարիղ մղող գլխաւոր խողովակին խափանարարական արարքի մը ենթարկուելէ երկու օր ետք, մինչ հակամարտիկան յարձակումները կը շարունակուին:



Ան ըսած է, թէ խողովակին անգործածելի դառնալը օրական մօտաւորապէս 7 միլիոն տոլար վնաս կը պատճառէ, մինչ քանդուած երկիրը այդ եկամուտին կարիքը ունի վերակառուցման համար:

Խողովակին պայթումը տեղի ունեցած է Ուրբաթ առաւօտ Պաղտատէն շուրջ 200 քմ. հիւսիս գտնուող Պայճի քաղաքին մօտ՝ հիւսիս-կէտրոնական իրաքի այնպիսի մէկ շրջանին մօտ, որ տակաւին զօրավիճակ կը կանգնի Սատամ Հիւսէյնի եւ ուր ամերիկեան ուժերուն դէմ յարձակումները յաճախակի են:

Երէկ խողովակին վրայ ծայր տուած հրդեհը կը շարունակուէր: Ամերիկեան բանակին մէկ բանբերը յայտնած է, թէ հրդեհը սանձուած է քարիղի հոսքը կասեցնելով, սակայն յստակ չէ, թէ անիկա ե՞րբ պիտի մարի:

Պաշտօնատարներու համաձայն, Սատամի Ապրիլի տապալումէն ի վեր խափանարարական գործողութիւնները եւ գողութիւնները անվերջանալի դարձած են, իսկ քարիղի հանքերուն հասած վնասին պատճառով, 700 հոբերէ միայն 150ը կ'աշխատին անհրաժեշտ ձեւով:

3ԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

Բրիտանական բանակին մէկ բանբերը երէկ յայտնած է, թէ երկու իրաքցիներ եւ դանիացի պիւտր մը սպաննուած են Շաբաթ գիշեր հարաւային Պարսա քաղաքին մէջ տեղի ունեցած բախումի մը ընթացքին:

Քոփենհակընի մէջ դանիական բանակին

հրամանատարութիւնը յայտնած է, թէ կրակոց մը ծայր տուած է մինչ պիւտրը եւ անոր միատրը կը փորձէին քանի մը իրաքցի փոխադրող բեռնակառք մը:

Անիկա ըսած է նաեւ այլ իրաքցի մը վիրաւորուած է եւ դանիական ուժերը վեց ուրիշներ ձերբակալած է:

Սակայն Քոփենհակընի մէջ պաշտպանութեան նախարարութեան մէկ պաշտօնատարը ըսած է, թէ դանիացի պիւտրը կրնայ արկածով սպաննուած ըլլալ իր միատրին մէկ անդամին փամփուշտով:

Միւս կողմէ, ամերիկեան բանակը երէկ յայտնած է, թէ Պաղտատէն 15 քմ. հիւսիս Թաճի մէջ իրաքցի մը սպաննուած է եւ ամերիկացի երկու պիւտր վիրաւորուած՝ դաշնակից ուժերու վրայ նորագոյն յարձակումներէն մէկուն ընթացքին:

Ըստ գնդապետ Պիլ Մքոնըլլի, ամերիկեան ուժերը Շաբաթ գիշեր տեղի ունեցած խուպարկութիւններու ընթացքին ձերբակալած են 30 անձեր, որոնց երկուքը՝ նախկին վարչակարգին «միջակ մակարդակի» պաշտօնատարներ:

Ամերիկեան բանակը երէկ յայտնած է նաեւ, Շաբաթ՝ էջ 9

ԱՐԱՅԱԹ ԱՆԲԱՒԱՐԱՐ ԿԸ ՆԿԱՏԵ ԶՈՐՍ ՔԱՂԱՔՆԵՐԷ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ երէկ Այսրոյրդանանի 4 քաղաքներէ քաշուելու իսրայէլեան ծրագիրները խաղաղութեան ճամբու քարտէսը շրջանցելու փորձ մը նկատուած է:

Ան Ռամալլայի մէջ թղթակիցներու յայտնած է, թէ Իսրայէլ պէտք է գործադրէ «ճամբու քարտէսին մէջ նշուածները փոխանակ ժամանակ կորսնցնելու»:



Արաֆաթ կը խօսէր մինչ իսրայէլացի եւ պաղեստինցի պաշտօնատարներ կը պատնասուէին վերջնականացնելու յառաջիկայ օրերուն Երիթովէն եւ Քալքիլիայէն ուժերու հեռացման ժամանակացոյցը:

Մինչ այդ, ապահովութեան աղբիւրներու եւ սկանստեսներու համաձայն, Այսրոյրդանանի Նապլուս քաղաքին մէջ անջատ դէպքերու ընթացքին պաղեստինցի գործաւոր մը սպաննուած է եւ 2 ուրիշներ վիրաւորուած երէկ:

ուսած էր տարի մը առաջ: Իսրայէլեան եւ պաղեստինեան աղբիւրներ երէկ յայտնեցին, թէ Քալքիլիա քաղաքին մէջ իսրայէլեան բանակը Շաբաթ գիշեր ձերբակալած է Իսլամական Ժիհադի 2 անդամներ:

Արաֆաթ հարց տուած է, թէ ի՞նչ կը նշանակէ քաշուիլ պաղեստինեան հողամասերու մէկ փոքր բաժինէն մինչ իսրայէլացիք անցարգելները կ'աւելցնեն:

Կահ կարասիներ ծախող խանութի մը մէջ դիմակաւոր 4 փրէնէլներ մտած ու սպաննուած են գործաւորը եւ վիրաւորած խանութին տէրը: Իսկ բջիջային հեռաձայններ ծախող այլ խանութի մը մէջ, դարձեալ դիմակաւոր 2 անձեր կրակած ու վիրաւորած են այլ գործաւոր մը:

Այլ գիծի վրայ, 15 պաղեստինցիներ, որոնք իրենց իսկ ղեկավարութեան կողմէն քանտարկուած են Երիթովի մէջ, Շաբաթ առաւօտուն հացադուլի սկսած են՝ բողոքելու համար իրենց արգելափակումին դէմ:

Միւս կողմէ, Հեպրոնի մէջ, ըստ ականստեսներու, իսրայէլեան բանակը սկսած է մնայուն երկու կեդրոններ կառուցել: Հեպրոն վերագրաւ:

Գէպքերուն դրդապատճառները չեն յստակացած:

Անոք մաս կը կապուած են Իսրայէլի կողմէ հետապնդուած 19 պաղեստինցիներու խմբակի մը: Պաղեստինեան ապահովութեան ուժերը վանոնք բանտարկած են Օգոստոս 4ին:

Իսրայէլացի եւ պաղեստինցի պաշտօնատարներ պէտք է քննարկեն նաեւ Թուրքիայի մէջ ապահովութեան հսկելու պարտականութիւնը պաղեստինցիներուն փոխանցելու հարցը:

Միւս կողմէ, Հեպրոնի մէջ, ըստ ականստեսներու, իսրայէլեան բանակը սկսած է մնայուն երկու կեդրոններ կառուցել: Հեպրոն վերագրաւ:

(ԱՅՓ)

ԼԻՊԻԱ ՍՏԱՆՁՆԵՅ ԼՈՔԸՐՊԻՒ ՌՄԲԱՀԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԻԱ ՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Լիպիա պաշտօնապէս ստանձնած է 1988ի Լոքըրպի ռմբակարումին պատասխանատուութիւնը՝ ՄԱԿի յանձնուած նամակով մը:

«Լիպիա» իբրեւ գերիշխան պետութիւն, դիւրացուց «Փան Ամ 103» օդանաւին ռմբակարումով անբաստանուած երկու կասկածելիներուն արդարութեան յանձնումը եւ անիկա իր պաշտօնատարներուն արարքներուն պատասխանատուութիւնը կը ստանձնէ», ըսած է նամակը, որ Ուրբաթ օր ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին ներկայ նախագահին յանձնուած է ՄԱԿի մօտ Լիպիոյ դեսպանին կողմէ:

Նամակը, որ կը յաջորդէր 270 պոհերուն ընտանիքներուն հետ տարիներու բանակցութեանց, յայտնած է, թէ Լիպիա «պատրաստ է յարմար հատուցումը վճարելու» պոհերուն ընտանիքներուն:

Նախապէս ամերիկացի պաշտօնատար մը ըսած էր, թէ Լիպիոյ նամակը պիտի հաստատէ, որ Երեքշաբթի օրն իսկ պոհերիական հաշիւի մը մէջ 2,7 միլիարտ տոլար վետեղելու նպատակ ունի, սակայն նամակը այս մանրամասնութիւնները չէ նշած:

ՄԱԿի լղուած անջատ նամակի մը մէջ, Մ. Նահանգներ եւ Բրիտանիա պատրաստակամութիւն արտայայտած են Լիպիոյ դէմ հաստատուած ՄԱԿի պատժապիջոցներուն ջնջումը արտօնելու «անմիջապէս որ անհրաժեշտ գումարները» յատուկ հաշիւի մը փոխանցուին:

Ապահովութեան Խորհուրդին ներկայ նախագահը՝ Սուրիոյ դեսպան Միխայիլ Ուէիպէ, գոհունակութիւն արտայայտած է երկու նամակները ստացած ըլլալուն համար, յայտնելով, որ բանաձեւի նախագիծի մը առաջարկը կ'ակնկալէ Երկուշաբթի օր իսկ (այսօր):

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴԱՆԱԻԵՐ ԿԸ ԽԱԽՏԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՕԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Բանակի ընդհանուր հրամանատարութիւնը երէկ հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ Շաբաթ, 16 Օգոստոսին յետմիջօրէին իսրայէլեան հետախուզական օդանաւ մը թռիչք կատարեց Պէրլեթի եւ Ժիլի միջեւ գտնուող շրջաններուն վերեւ եւ ապա ուղղուեցաւ դէպի Նաբուրա:


Հաղորդագրութիւնը աւելցուց, որ երէկ կիրակի, 17 Օգոստոսին կէսօրէ առաջ ժամը 11:35ին իսրայէլեան այլ օդանաւ մը թռիչքներ կատարեց Սայտայի վրայ, ապա ուղղուեցաւ դէպի Հիւսիսային Լիբանան:

Միւս կողմէ, Իսրայէլի պաշտպանութեան նախարար Շառուուլ Մոֆաթ իսրայէլեան կառավարութեան գումարած երէկուան ժողովին ընթացքին յայտնեց, որ հիւսիսային իսրայէլի մէջ կառավարութիւնը նախագուշակական միջոցներ կ'որոգորէ ապահովական կացութիւնը կայուն պահելու նպատակով:

Մոֆաթ նկատեց, որ շրջապատուած էր Իսրայէլի Լիբանանի եւ Սուրիոյ յղած է նամակներ եւ դիմելի տուած, որ կացութիւնը վտանգաւոր է:

ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՉ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹ 3ԱՏՈՒԿ ԳԻՆԵՐՈՎ ԾԱԽՈՒ ԵՆ.-

ԱՐԻՆ - ՀՈՄԱԼԻՐ
▶ Խանութներ 30 եւ 40 քառ. մէթր
▶ Սրահներ 175 եւ 200 քառ. մէթր



ԱՐԱԳԱԾԻ ԾԵՆԵՐ
▶ Խանութներ 30 եւ 50 քառ. մէթր
▶ Սրահներ 300 քառ. մէթր

3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 03 / 618806 քիփն:

ԾԱՂԿԱԶՈՐ, ՄԷԿ ՕԳՈՍՏՈՍ

Լրբենի ծաղրով արհամարհեցիք
Ոգու վառ պեղմունք - միտք ու երապանք,
Նիւթի տաճարում արբած պարեցիք՝
Մոռացած անմահ, անհունի տենչանք
ԱՆԵՏԻՔ ԻՍՏՆԱԿԵԱՆ

Երեւանի տոթէն եւ փոշիէն ետք, սուսկի պէս բուսած սրճարաններէն հեռու, Մաղկաձոր: Երբ պատանի էինք, այս անունը կը յիշեցնէր քեզ մը զորատր եւ աւելի շատ՝ հայ մտքի առասպելը: Հայ Գրողներու ստեղծագործական հանգստավայրը... Դեռ քանի մը տարի առաջ մուտքի դիմացի արեւուտ պատին տակ նստած էր բանաստեղծ Գէորգ Էմին, որուն հետ ունեցեալ գրոյց մը: Արդէն նահապետ, ինք որ անցած էր խորհրդային տասնամեակներու տաքէն եւ պողէն, խօսեցաւ անկախութեան, ազատութեան եւ այդ կարգի բաներու մասին, բայց նաեւ ինչպէս ուրիշներ, խօսեցաւ երկիրը խորհրդային պէս հարուածող խելագարութեան հասնող չարաշահումներուն եւ անոնց հետեւանքներուն, երկրի եւ իմացական աշխարհի աղքատացման մասին:

Պատուհանէս անդին կը սկսի անտառը, ծառեր, որոնց անունը չեմ կրնար տալ քաղաքային տգիտութեամբ: Խորքի վրայ դարձած նստարան կայ, ուր մտքի անգաստանի մշակներ նստած, բարխած, երազած եւ երեւակայած են՝ ոգի եւ հոգի տալու համար սերունդներու: Չհամարձակեցալ յարկի աշխատանքներու հիւսիսները, թէ ո՞վ կամ որո՞նք բնական էին այս կամ կողքի սենեակը, բայց կը զգայի որ հայ միտքը, ոգեկանութիւնը անցած են այստեղէն, դարերու կտակելու համար մեր ինքնութեան ինքնատիպ տարրերը: Առաւօտուն գրատան մը մէջ գտած էի հայ բանաստեղծութեան ծաղկաքաղ մը, անուններ եւ տաղեր, մարդիկ, որոնց մէջ շատեր այս հինգած քարերուն վրայ քայած են, նստած են այս մշաձած քաղկաթոններուն մէջ: Ի՞նչպէս չմտածէի, որ մեր ժամանակակիցներու ստուար մեծամասնութիւնը, զանազան աղքատ եւ աղքատացնող պատճառներով ընտրած է այս ժառանգութեամբ չհարողուելու ճանապարհը: Ի՞նչպէս չմտածէի, որ նորերը, որոնք կու գան, ի՞նչ բնոյթի հակականութիւն պիտի պահեն եւ իրենց կարգին կտակէին: Պիզնը, պիզնը Էտոմիսիսիւրէյը, բոմբիլը սայլը, դէպի հեռուոր երկիրներ ճամբորդութիւններ, զբօս, ժամանց, քաղինս, կը փոխարինեն Մկրտիչ Պէշիկեանի նկարագիր կերտող «Եղբայր եմք մեք»ը, չիլոուդ Ներսէս Մեգպուրեանը, որ կ'երգէ հայ լեզուն՝ ինչնք երգը՝ «Ո՞վ մեծաքանչ դու լեզու, ո՞վ հեշտ բարբառ մայրական. փափկահնչուն բառերուդ նման, արդեօք այլ տեղ կա՞ն»: Ի՞նչպէս խորհիլ, որ հայ ենք առանց Ռաֆայէլ Պատկանեանի «Արաքսի Արտասուր»ին: «Հեռու, հեռու քղեցին բընիկ ազգըն իմ Հայկեան, նորա տեղը ինձ տուին ազգ անկրօն, մոլեկան»: Ի՞նչ բնոյթի հայութիւն առանց Աւետիք Իսահակեանի, Մուշեղ Իշխանի, Խաչիկ Դաշտենցի, Դանիէլ Վարուժանի, եւ երկար է շարքը:

Երբ տարբեր պատճառներով, բայց նոյն արդիւնքով

ակնանտես կ'ըլլանք բազմազոյն տեղատուութիւններու եւ անոնց արդարացումներուն, երբ թեւաթափ կ'ըլլանք, պահ մը լսենք Աւետիք Իսահակեանը, որ այս հարցերը ապրած է հաւանորէն Մաղկաձորի այս Տան պատուհանէն սեւեռելով աշխարհը եւ մեզ: Իր խօսքը իմաստուն վճիռ է, որ կ'ուղղուի ժամանակակիցներուս, եւ չխորհիմք որ ան կը խօսէր ուրիշներու:

Ես ձեզ ասում եմ՝ կը գայ Ոգու սով,
Եւ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ,
Կ'ընկնէք մուրալու յափրած որկորով՝
Հըրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ:

Ինք եւս նստած է հոս, այս սենեակներէն մէկուն մէջ եւ խօսած է մեզի մետրոպեան տառերով եւ նախահարերու լեզուով, անոնց խորհուրդին ունկնդիր: Իրեն եւ միւսներուն պէս, ես ալ ակնանտես, ակնաջուր եւ անգոր վկան եմ Ոգու սովին, Հայաստան եւ Մփիւռք, երբ չենք ժառանգեր, երբ յանուն գունագեղ իմաստութիւններու եւ կարծեցեալ արդիականութեան տեղատուութիւնը կը նկատենք իմաստութիւն: Այլեւս հայ գրողի եւ բանաստեղծի հոգեկերտ հրեղէն ու վեհ խօսքը չենք լսեր, չենք կարդար, օտարն ու անհարազատը կ'որդեգրենք ստապատիր արժէքներու հպատակելով, հայերէնն ու հայ գիրքը, հայ երգը, հայ մշակոյթը, հայուն իրաւունքը մեր տուններէն եւ սրտերէն կը վանենք, յանուն երջանկութեան եւ տանիքներէն պոռալով, որ «մարդ մէկ անգամ պիտի ապրի»...

Չով գիշերը պարուրուած է անտառով: Այս այն պահն է, երբ լուսնեան մէջ կը ծնին արձագանգներ: Դէպի յաւերժ անդամ մեկնածներուն ծնծղաները յանած ժառանգներ կան, որոնք, Ռազմիկ Դաւուդեանի խօսքով, պիզնրպին, զբօսին եւ քաղինոյին կը հակադրեն արժատներուն պատգամը:

Ես ծնուել եմ,
Պիտի ապրեմ,
Ապրեմ երկրիս բախտով,
Ապրեմ ձեզնով,
Ինձնով,
Ապրեմ քանի դեռ կամ...

.....
Մեր կոխած հողում տորոնելով
Եւ երբեմն իմաստուն,
Յաճախ անիմաստ մեր խօսքերից
Օրորուելով:

Մաղկաձորի յառջացող գիշերուան մէջ, ուր թեւեւ վերջին ելեկտրական վառած լամպը որ կը խանգարէ անտառի խորհուրդը, սենեակիս լոյսն է, իսկ լոյս թէ մութ, կ'ուզեմ ըսել ստուերներուն որոնք կարծէք ըսելիք ունին, որ տորոնելով հանդերձ, լսելով հանդերձ իմաստուն եւ յաճախ անիմաստ խօսքեր, հարկ է ապրիլ երկրի բախտով...

Մաղկաձորի անտառը բնակուած է այս գիշեր:

ՅԱԿՈՔ ՊԱՆԵԱՆ

Մաղկաձոր, 1 Օգոստոս 2003

ՅԱԿՈՔ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Երկուշաբթի, 11 Օգոստոս 2003ին, Միացեալ Նահանգներու Նիւ Ճրք-գի քաղաքին մէջ իր մահկանացուն կ'ընթացէ սփիւռքահայ գրականութեան երիցագոյն անդամը՝ բանաստեղծ, արձակագիր, մտաւորական եւ հայ դասակարգ երաժշտութեան մեկնաբան Յակոբ Յ. Ասատուրեան:

Յակոբ Յ. Ասատուրեան ծնած է 1903ին, Կապադոկիա, Մաժակ գաւառի Չոմախլու գիւղը: 1915ին, 1600 տարագրեալներու հետ, կ'անցնի Տէր Զօրի անապատներէն եւ իր մորթին վրայ կ'ապրի Մեծ Եղեռնի սարսափն ու տառապանքները: Կը փրկուի, եւ երեք որբանոցներ տեղափոխուելէ ետք, 1920ին կը հաստատուի Նիւ Եորք:

Բանաստեղծութիւններով հայ գրականութեան անդաստանէն անցնելու մտքը գործած Յակոբ Յ. Ասատուրեանի գրչին կը պատկանին տասներկու հատորներ, որոնց մէջ յատուկ տեղ կը գրաւեն «Յովակիմի թոռները», «Կոմիտաս վարդապետի հետ», «Վերջալոյսի յոյգեր» եւ «Սերունդները միացող» անուն գործերը:

ՅԱՒԱԿՅԱԳԻՐ

Յատով իմացանք սփիւռքահայ գրականութեան անհայտեան՝ բանաստեղծ, արձակագիր, երաժիշտ եւ մտաւորական հարիւրամեայ Յակոբ Ասատուրեանի շիշուրը, որ պատահած է Երկուշաբթի, 11 Օգոստոս 2003ին, Միացեալ Նահանգներու Նիւ Ճրքի քաղաքին մէջ:

Այս տխուր առիթով, Լիբանանահայ Գրողներու Համախմբումը իր խոր ցաւակցութիւններով կը յայտնէ հանգուցեալ գրագէտին ընտանեկան պարագաներուն եւ աներկահայ գրչեղբայրներուն:

ԼԻԲԱՆԱՆԱԿՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

Պէշրոթ, 14 Օգոստոս 2003

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԹԱՓ ԿԸ ՍՏԱՆԱՆ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԷՋ

Այս տարուան պետական պիւտճէն 50 միլիոն դրամի գումար մը յատկացուած է Վայոց Ձորի մարզի 10 հանրակրթական դպրոցներուն մէջ վերանորոգման աշխատանքներ իրագործելու համար:

Գլխաւորաբար կը կատարուին տանիքներու վերանորոգութեան աշխատանքներ, մէկ-երկու դպրոցներու մէջ սկսած են նաեւ ապակեպատման եւ այլ բնոյթի աշխատանքներ:

Հինարարական աշխատանքները արդէն կը մօտենան իրենց աւարտին: Յայտնենք, որ Վայոց Ձորի մարզին տարածքին կառուցուող եւ վերանորոգուող շարք մը կառույցներու շինարարական աշխատանքները կ'իրականանան միջազգային կազմակերպութիւններու օգնութեամբ:

Յայտնենք, որ Վայոց Ձորի մարզին տարածքին կառուցուող եւ վերանորոգուող շարք մը կառույցներու շինարարական աշխատանքները կ'իրականանան միջազգային կազմակերպութիւններու օգնութեամբ:

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՄԵԾ ԻՐԱԿԱՐԶՈՒԹԵԱՆ

ՆԵՏԵԻՇԵՔ

BIG SALE

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

5000 ՄԵԹՐ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ



Թ-Ի ՇԼՐԹ-6.000 Լ.Ո.



ՀԱԳՈՒՍՏ 8.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ-2.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ-7.000 Լ.Ո.



ՀԱԳՈՒՍՏ 2.000 Լ.Ո.



ՇԱՊԻԿ 10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ-10.000 Լ.Ո.



Թ-Ի ՇԼՐԹ-5.000 Լ.Ո.



**- ՏԱԲԱՏ 5.000 Լ.Ո.
- ԱՆԹԵՒ ՊԱՐԶ 2.000 Լ.Ո.**



**- ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԶԵՒԻ Թ-Ի ՇԼՐԹ- 10.000 Լ.Ո.
- ԳԼԵԱՐԿ 2.000 Լ.Ո.**



ՍԱՆՏԱԼ 4.000 Լ.Ո.



ԿՕՇԻԿ 4.000 Լ.Ո.



ԼՈՂԱԶԳԵՍՏ 9.000 Լ.Ո.

*** ՀԱՄՐԱ ՄԻՆԵՍԻ ՓԻԵՍՏԵԼԼԻԻ ԿԻՅ**
☎ 01 / 343343

*** ՆԱՊԱԹԻԷԻ ՀՐԱՊԱՐԱԿ**
☎ 03 / 949796

*** ՊԸՐԺ ՊԱՐԱԺՆԷ**
☎ 03 / 678501

*** ԱՆԹԻԼԻԱՍ ՄԵՆԹՐ St. Elie**
☎ 03 / 814161

*** ՄԱՐ ԷԼԻԱՍ CLASS ՎԱՃԱՐԱՍԻ ԿԻՅ**
☎ 03 / 602554

*** ՅԸՐՆ ԷԼ ՇԸՊԷՔ ՄԻՆԵՍԻ ՍԲԱԼԱ**
☎ 01 / 294090

Միջուկի և Միջուկային Միջուկ

ԳՐԱԳԷՏՆԵՐ ԳԵՐՄԱՆԻԱՆ ԿԸ ԴԻՏԵՆ ԻՐԵՆՑ ԱՆՁԻՆ ԸՆԴՄԷՋԷՆ

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՍԸ ԿԸ ՇՈՒԱՆՑ Բ. ԱՃԽԱՐԿԱՄԱՐՏԻ ԵՒ ՈՂՋԱԿԻՉՈՒՄԻ ԲՆԱԲԱՆՆԵՐԵՆ՝ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՎ ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍԸ, ՈՐ ԽԱՈՆ ԸԱԿԱԶԴՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՍՏԵՂԾԷ: «ՏԸ ՆԻՒ ԵՈՐԵ ԹԱՅՄՁ» ԿԸ ԳՐԷ.



Լոնդոնի Երկրագործական ճարտարապետական թանգարանը:

Ճիւղիթ Հերման արեւելեան Պերլինի փաստեցող սրճարանին մէջ քոքա քոլալի դէմ կը պայքարի կանաչ թէյով, մինչ կը բացատրէ իր դերը Գերմանիոյ գրական նոր շարժումին մէջ: 32 տարեկանին ան հեղինակն է մրցանակի արժանացած «Մամը հառու լէյթը» կարճ պատմութեան փոքրիկ գրքով, ինչպէս նաեւ՝ «Նաթիկ պաթ կոսթի» վէպին, որոնց անգլերէն թարգմանութիւնները լոյս պիտի տեսնեն յառաջիկայ տարի: «Շատ յատկանշական գերմանական վերածնունդ մը կայ,- կ'ըսէ ան:- Երէջ սերունդը աւելի հետաքրքրուած է անցեալով, պատերազմով եւ քաղաքականութեամբ: Իմ սերունդս ներհայեաց է»:

Վերջին 5 տարիներուն քանի մը տասնեակ գերմանացի գրագէտներ, մեծ մասը՝ 20ական եւ 30ական տարիքի երիտասարդներ, սկսած են գրել Պերլինի պատին փլուզումին յաջորդած ժամանակակից կեանքին մասին: Անոնց մեծ մասը սկիզբը դիմաւորուեցաւ խանդավառ ինքնամոռացումով, եւ քննադատներ գովաբանեցին վերամիացած Գերմանիոյ մէջ գրական նոր ուղեւորութիւններուն թարմ ուժը:

«Սկիզբը գնահատեցին անցեալի բռնութիւնն ու մեղքերէն ձերբազատելու մեր մօտեցումը,- կ'ըսէ Հերման:- Անտեսեցինք մեր անցեալը եւ հեռացանք անկէ, ինչ որ հօգոր ուժի արդիւնք նկատուեցաւ: Սակայն ներկայիս տրամադրութիւնները փոխուած են: Քննադատներ հարց կու տան, թէ ինչպէ՞ս կրնանք այսքան ներհայեաց ըլլալ: Ինչ կը կրնար այլ բաներու մասին գրել»:

Բ. Աշխարհամարտն ու Ողջակիզումը այլեւս իշխող նիւթերը չեն երիտասարդ գրագէտներու գոյուցման պատմութիւններուն մէջ: Փոխարէնը՝ անոնք կը գրեն Պերլինի պատին փլուզումէն ետք արուեստագէտին դերին մասին, գաղթականներու կեանքին եւ յայտնապէս ախ-

տազին կերպով՝ ուրախութեան խորութիւնով բնութիւն մասին: Ոմանք հարց կու տան, թէ արդեօք երեւակայական պատմութիւններու մէջ յիշողութիւնը աւելի երկար չէ՞: Արդեօք Հրէական Ողջակիզումէն, Գերմանիոյ ընկերային խոցերէն եւ պատերազմի ուրուականէն լիսած կուսիքը կրասի, Վ. Եպպոլի եւ Պեռնարտ Շլիքի լուրջ մտահոգութիւնները վերջ կը գտնեն գրագէտներու նոր սերունդին հետ:

«Ասիկա լուռ պատմութիւն մըն է,- կ'ըսէ գերմաներէն գրականութեան պատմաբան Ալեքսանտր Քեյնինա:- 1968ի սերունդի քննադատներ կ'ըսեն, թէ նոր սերունդի գրագէտները պատմութեան զգացողութիւն չունին: Ես կը կարծեմ, թէ անոնք կը մօտենան նոր գոյութեան պաշտ ոճի մը, որ փորձառական է, ենթակայական եւ խորհրդածական»:

Գրական այս նոր ուղղութեան մաս կը կազմեն նախկին արեւելեան եւ արեւմտեան Գերմանիաներէն գրագէտներ, որոնց շարքին են նաեւ իրենց ձայնը ուժեղ կերպով լսելի դարձնող կիներ: Անոնք բոլորն ալ կը պատկանին 1989ի սերունդին եւ Պերլինի պատին փլուզումի ժամանակներուն: Արեւմտեան Գերմանիայէն Տէյվիտ Վակնէր ներշնչուած է Փրուսթէն, Քրիսթիան Քրախթ կը սիրէ գրողութիւններ յառաջացող, Վլաստիմիր Քամիլըր արժուէր բարձրացընող գաղթական մըն է, Ճեյն Էրփենպէք եւ Անթի Ռալֆ Սթրոնգը ներհայեաց են:

Ինկո Շուլց, որուն պատմութիւնները այսպէս են, դաժան ու տպաւորիչ, տարիքով աւելի մեծ է եւ քիչ մը ետ՝ գրական փոփ շարժումին պայթիլը աղմուկէն: Ան արդէն ծանօթ է արեւմուտքի մէջ: Ինչ կը վերաբերի Հերմանի, ան ինքնին իր սերունդին խորհրդանիշն է, թէ եւ անոր երկրորդ գիրքին հակազդեցութիւնները խառն են:

Նոր սերունդի գրագէտներուն համաձայն, գերմանացիք տակաւին սկեպտիկ են յետպատերազմեան գրականութեան նկատմամբ եւ հաճելի կը գտնեն իրենց երգիծական ոճը: Սակայն այս գրագէտներուն գործերը հետզհետէ աւելի սուր քննադատութեան կ'արժանանան: Ինկապոլկ Պախմանի գրական մրցանքը, որ գերմանական արդի գրականութեան ամէնէն յատկանշական երեւութիւններէն մէկը կը նկատուի, քննադատներու համաձայն, յուսախաբուութիւն մըն էր անցեալ տարի:

«Ճրանքֆոլըթըր Այլեմայն Յայթունկ» թերթին քննադատը գրած էր, թէ ժամանակակից գրականութիւնը կը տառապէր «սեփական վի-

ճակին վրայ կեդրոնանալու յոգնեցուցիչ միօրինակութենէն»: Գերմանացի երիտասարդ ընթերցողները իրենք անհանդարտ են եւ կը փնտռեն նոր ինքնութիւն մը, որ ոմանց կարծիքով՝ ուրախութիւնն է հարցախոյզներ ցոյց կու տան, թէ «ուրախ ըլլալը» երիտասարդ գերմանացիներուն գերագոյն նպատակն է: Հետեւաբար անոնք յայտնապէս հաճոյք կը գգան իրենց փնտրութեան մասին կարգալով:

Հերմանի կարգ մը տիպարները արուեստագէտի հովեր առնող 30 տարեկան երիտասարդներ են, որոնք կը տառապին հոգեկան անկումէ եւ կը սպասեն, որ կեանքը ծաղկի սեւալիւն արկածախնդրութիւններու եւ ծխախոտի մշուշի մը մէջ: Սակայն Քամիլըր, ուսու հրեայ մը, որ Գերմանիա հաստատուած է 1990ին, իր գործերուն ընդմէջէն կ'արտայայտէ այն կարծիքը, թէ Պերլինի ամէնէն ուրախ եւ նուազ ծանրաբեռնուած բնակիչները նորագոյն գաղթականներն են, որոնց կեանքը արտառոց է, արտասովոր եւ հազուադէպորէն ձանձրացուցիչ: Տէյվիտ Վակնէրի առաջին վէպը՝ «Մայնայթ-պլու թրաուզըրը» կը փնտռէ արեւմտեան Պերլինի երիտասարդներուն ձանձրոյթին պատճառը: «Նպատակս արեւմտեան Պերլինի հարուստ երիտասարդները ձաղկելն է,- կ'ըսէ ան:- Ձեռով մը կ'ուզեմ գծել այս աշխարհին կայուն պատկերը: Վերջ կ'գտնէր Արեւմտեան Գերմանիան, ուր Պոնն ու Քրոնիան տիեզերքի կեդրոնը կը նկատուէին, ինչպէս նաեւ վերջ կը գտնէր Արեւելեան Գերմանիան»:

Վէպը կը ձգտի ցոյց տալ 1970ական եւ 1980ական տարիներուն իրբեւ օրինակելի պատկեր ընդունուած գերմանական ընկերութեան հարուստ խաւին կառուածութիւնը, մտերմիկ կեանքը եւ որոշ փտածութիւնը: Գիրքը կը սկսի 30ական տարիքի տիպարի մը նկարագրուել:

ՄԵՆՔ ԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՂԵՐ ԷԻՆՔ

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ՍԱԿԱՅՆ ԸՆԴԱՔԱԳԷՏՆԵՐ ԿՏԱՆԳԱԽՈՐ ԿԸ ՆԿԱՏԵՆ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ: «ՏԻ ՕՊՁԵՐՎՈՐ» ԿԸ ԳՐԷ.

Լուսանակները կը պատկերեն աքսորեալներ՝ խղճալի կապոցներ իրենց ուսին կամ ձեռքերուն մէջ, յոգնատանջ կտորով Եւրոպայի ճամբաները՝ դէպի անորոշ ապագայ:

Բ. Աշխարհամարտէն ետք հրապարակուած օրէնքներու համաձայն, այս մարդիկը իրենց ցեղային պատկանելիութեան պատճառով ստիպուած էին լքել իրենց տուններն ու տացուածքները եւ հեռանալ այն երկիրներէն, ուր այլեւս տեղ չունէին:

Սակայն ասիկա չի վերաբերիլ նացիներու կողմէ հրեաներու, լեհերու կամ ուսերու մաքրագործումին: Այս մարդիկը գերմանացի էին: Գերմանիոյ Երրորդ հանրապետութեան պարտութենէն ետք շուրջ 15 միլիոն գերմանացիներ վտարուած են եւրոպական երկիրներէ:

Գերմանացիները իրբեւ զոհ պատմականօրէն անտեսուած են Հրէական Ողջակիզումին, զինուորական բազմաթիւ արշաւանքներու եւ Լոնտոնի դիշերային ահաւոր ուժեղացումներուն պատճառով: Արդի Գերմանիան ծնունդ առած է երկրին յարուցած սարսփներուն հաւաքական մեղքերը ընդմէջէն: Յանցանքի այս զգացումը մաս կը կազմէ գերմանացիներուն ազգային հոգեբանութեան:

Անոնք, որոնք փորձած են խօսիլ Գերմանիոյ տառապանքին մասին, հաւաքաբար լուցուած են, որովհետեւ փորձած են պատմութիւնը վերատեսութեան ենթարկել կամ նկատուած են նոր նացիներ: Շատեր այդպէս էին: Սակայն, մինչ տասնամեակներ կ'անցնին, աստիճանաբար հատուցումներ կը կատարուին նացիներու զոհերուն եւ ճիգ կը թափուի անոնցմէ գողցուած իրերուն վերատիրանալու: Հետզհետէ աւելի մեծ թիւով գերմանացիներ աւելի համարձակ կերպով կը խօսին իրենց ապրած կորուստներուն մասին:

Վերջերս ծնունդ առած է շարժում մը՝ ներշնչուած կուսիքը կրասի նոր լոյս տեսած մէկ գիրքէն, որուն առաջը 1945ին խորհրդային բանակի զինուորներէն խոյս տուած գերմանացի գաղթականներով լեցուն նաւու մը խորտակումն է: Ծայր տուած է գերմանացիներուն ապրած փորձառութիւնը վերատեսութեան ենթարկելու նոր արշաւ մը: Այս տարի թիւեղով եւ պատկերներով նշուեցաւ դաշնակից ուժերու կողմէ Համպուրկը հրդեհած կատարի ուժերու ծովային 60ամեակը: Բանավէճի նիւթ դարձաւ տասնեակ հազարաւոր բնակիչներու սպանութեան արդարացումը:

Այժմ ճիգ կը թափուի ոգեկոչելու Արեւելեան Եւրոպայէն դուրս քշուած գերմանացիներուն տառապանքը: Վտարաններու Ընկերակցութիւնը կը ծրագրէ հիմնել թանգարան մը եւ հիմնարկ մը, որոնք պիտի կեդրոնանան նախկին Զեյտլիցի վերականգնման և Լեհաստանի մասն երկիրներէ գերմանացիներու արտաքսումին վրայ:

Թեամբ: Ան ունի իրեն նման ընկերուհի մը: Յարաբերութիւնը կը ձախողի զլիսաւորաբար այն պատճառով, որ անոնք ունին ամէն ինչ, որեւէ բանի կարիքը չունին եւ ոչինչ կայ, որուն դէմ պիտի ուզէին ըմբոստանալ:

Արեւմտեան եւ Արեւելեան Գերմանիայէն երիտասարդ սերունդի գրագէտներուն հասարակաց եզրը գաղափարաբանութեան դէմ հակակրուութիւնն է: Արեւելեան Գերմանիայէն գրագէտներ, ինչպէս՝ Շուլց եւ Էրփենպէք, հասակ նետած են պետութեան քարոզած գաղափարաբանութիւնը լսելով: Ոմանք կ'ըսեն, թէ անոնց Արեւմուտքի հարուստ դրացիները եւս հասակ նետած են գաղափարաբանութեամբ մը, որ կեդրոնացած էր աւանդական փորձառականութեան, հակախիստականութեան եւ հետզհետէ ծաւալող նիւթապաշտութեան վրայ: Մանուկներ հասակ կը նետէին ատելով իրենց մեծ հայրերն ու մեծ մայրերը, մինչ չափահասներ կը դատապարտէին իրենց ծնողներուն նացիական անցեալը: Ժողովրդային թէ գեղարուեստական գրականութեան չափանիշներ լրացնող երիտասարդ գրագէտներէն ոչ մէկը կ'ըսէ, թէ ներշնչուած է կրասին կամ Շլիքէն: Անոնք կը խորշին Գերմանիոյ ամէնէն փառաբանուած այս երկու գրագէտներուն բարոյական դասեր պարուսկող երեւակայական գրութիւններէն, ինչպէս կը բնորոշեն զանոնք:

Շուլցի վերջին գործը, որ լոյս պիտի տեսնէ յառաջիկայ տարի, կը պատմէ արեւելեան գերմանացի յուսահատ գրագէտի մը մասին, որ կը դառնայ բախտաւոր առեւտրական մը:

Սակայն Վակնէրի նոր վէպը, որ տակաւին լոյս չէ տեսած, ձեռով մը կը վերադառնայ հին սերունդի մտահոգութիւններուն: «Կիրթ» (յանցանք) վերամիացիլ այս գործը ցոյց կու տայ, թէ ինչպէս «գերմանացիները կը փայլալայն յանցանքի գողտրիկ եւ սիրունիկ զգացումները», կ'ըսէ ան:

«Գրագէտներու այս նոր սերունդին մղիչ ուժը ինքզինքին մասին մտածելն է,- կ'ըսէ Վակնէր:- Լուսարձակները կեդրոնացած են այն նոր գրագէտներուն վրայ, որոնց գործերը աւելի դիւրամատչելի են եւ առաւելաբար կը վերաբերին Պերլինի: Սակայն խանդավառութիւնը որոշ չափով մարած է ներկայիս: Միայն ժամանակը ցոյց պիտի տայ, թէ ո՞ր կը գտնուիք»:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ

«ՊԻ. ՊԻ. ՍԻ.» Ի ԿՈՂՄԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍԸ ՑՈՅՑ ԿՈՒՏԱՅ, ԹԵ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԵՋ ԱՐՈՒԵՍԻ ՄԱՐԶԻՆ ՅԱՏԱՑՈՒԱԾ ԵՐԲԵՄՆԻ ԸՆԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԿՐՃԱՏՈՒԻՆ

Գերմանիա միշտ հպարտ եղած է իր արուեստներով: Անիկա բազմաթիւ այլ երկիրներէ աւելի մեծ թիւով թատրոններ, օփերաներ եւ թանգարաններ ունի: Անոնց մեծ մասը կ'արժանանայ պետական առատաձեռն հոգածութեան: Սակայն պայմանները սկսած են փոխուիլ: Գերմանիոյ տնտեսութիւնը տագնապի մէջ է: Գործազրկութեան համեմատութիւնը բարձր է, Գերմանիոյ առողջապահական, կրթական եւ ընկերային սպասարկութիւնները տուժած են: Վերջին հարուածը ստացած է արուեստներու օժանդակութեան իւրաքանչիւր մօտեցումը:

Բրիտանիոյ եւ Ֆրանսայի բաղադրատաճ՝ Գերմանիոյ մէջ արուեստները միշտ ալ տարածուած են տեղական եւ շրջանային մակարդակներու վրայ եւ չեն կեդրոնացած միայն մայրաքաղաքին մէջ:

Այսպէս եղած է այն ժամանակներէն ի վեր, երբ Գերմանիա բաժնուած էր փոքր թագաւորութիւններու եւ իշխանապետութիւններու, եւ ուր կը շարունակուէր տեղական իշխաններու կողմէ արուեստներու հովանաւորութեան աւանդութիւն մը: Հետեւաբար այսօր իւրաքանչիւր փոքր գիւղաքաղաք կրնայ հպարտանալ իր թանգարանով եւ թատրոնով:

Այժմ այդ կոչումն ու աւանդութիւնը հարցականի տակ են: Գերմանիոյ հիւսիսային Համպուրկ քաղաքը հուշակաւոր է իր բարձր մակարդակի արուեստներով, սակայն նիւթական աղբիւրներու շուրջ վէճերն են, որոնք զլիսաւոր վերնազիւրներ կը խլեն այս օրերուն:

Պետական օփերայի երաժշտական ղեկավար Ինկո Մեցմախըր հրաժարած է, իսկ գեղարուեստական ղեկավար Լուվրոնց Լանկաուերթ եւս պիտի հրաժարի:



Գերմանիոյ հրաշքը վերջ գտած է: Պարոք ժամանակաշրջանի գեղեցիկ քաղաքներն Տրեստնի մէջ արուեստները իրենց մահուան սնարին մէջ են:

րելու համար,- կ'ըսէ ան:- Մեզի յատկացուած պիւտճէն այժմ սառեցուած է, եւ անկարելի է այս պայմաններուն մէջ լաւ օփերաներ ներկայացնել: Կրնա՞ք երեւակայել օփերայի երգչախումբ մը, որ ստփրանօ երգչուհիներ ունի, բայց ոչ թենորներ»:

Համպուրկի պետական թատրոնը եւս գոյապայքար կը մղէ իր 400 անդամներով: Սակայն, այնպիսի ժամանակները կը դիմաւորեն եւ գործազուրկները աշխատանք կը փնտռեն, ինչո՞ւ արուեստները պէտք է նիւթական մեծ նպաստներ ստանան:

«Գերմանիա աշխարհի լաւագոյն թատրոնը ունի: Յաւելել նպաստի կարիքը ունինք, փորձարկութիւններ կատարելու եւ նոր տաղանդներ գտնելու համար,- կ'ըսէ պետական թատրոնի գեղարուեստական ղեկավարը,- կ'ուզենք ընել բաներ, որոնք միշտ չէ, որ հանպիստ կը պարգեւեն, այլ ստեղծագործական իրագործ-

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ...

Շարունակուած՝ 7րդ էջէն

ժուճներ են: Այսօրուան քաղաքական ղեկավարները կ'ուզեն, որ արտագրենք միայն ժողովրդականութիւն վայելող եւ եկամուտ ապահովող թատերախաղեր, որոնք զբօսաշրջիկներ կը ներգրաւեն»:

Գերմանիոյ մէջ սուր տարբերութիւններ կան «բարձր» եւ «ցած» արուեստներու միջեւ: Համապարփակ մշակութիւնախարար Տանա Հորթաւա, որ ամբողջապէս կը նկատուի Գերմանիոյ արուեստի շրջանակներու վերահսակին կողմէ, կ'ըսէ. «Կ'ուզեմ մեր մշակութիւն մէջ ներգրաւել այն մարդիկը, որոնք ծնած չեն կ'օթէի գիրք մը իրենց ձեռքին: Յաւելեալ փայլքի եւ գրաւիչ բաներու պէտք ունինք այս քաղաքին մէջ: Հարկ է ներգրուաներ կատարել նաեւ ապագային համար, եւ ոչ միայն անցեալին»:

Ինչ կը վերաբերի իր «թշնամիներուն», ան կ'ըսէ. «Անշուշտ գեղարուեստական ղեկավարները պիտի քննադատեն զիս: Անոնք կը հրատարին իրենց պաշտօններն, որովհետեւ չեմ կրնար յաւելեալ գումարներ յատկացնել իրենց: Սակայն այս օրերուն ոչ ոք կրնայ»: Եթէ Համապարփակ մէջ տնտեսութիւնը հիւանդ է, ապա նախկին Արեւելեան Գերմանիոյ մէջ արուեստները իրենց մահուան սնորհք մէջ են: Պետական գանձարուեստները անգամ աւելի աղքատ է չոն եւ գործազրկութեան համեմատութիւնը կրկնապատկելի է:

Տրեստէնը՝ պարզ ժամանակաշրջանի գեղեցիկ քաղաքը շատ տառապած է: Անիկա 1945ին նիւթարկուած է անգլիացիներու եւ ամերիկացիներու ուժանակներով, զի մագրուած է համայնապարտեան կաշկանդումները, անցեալ տարի վերադարձ է աղէտալի ողողումներէ եւ այժմ կը դիմակալէ տնտեսական տագնապ մը:

«Այս օրերուն թանգարան մուտքի գիները այնքան բարձր են, որ չեմ կրնար մուտքի տուած մը գնել: Արուեստները միայն զբօսաշրջիկներուն համար են», կ'ըսէ 28 տարեկան գործազուրկ մը, որ նախապէս այցելած է Տրեստէնի թանգարաններն ու պատկերասրահները: Ան ճիշդ չի գտներ արուեստներու յատկացումները, երբ գործազրկութեան համեմատութիւնը բարձր է քաղաքին մէջ:

Սակայն այլ գործազուրկ մը կը պաշտպանէ արուեստներու յատկացումները. «Տրեստէնի տնտեսութիւնը վատ վիճակի մէջ է: Զբօսաշրջիկներուն եւ անոնց դրամին պէտք ունինք, որովհետեւ անիկա պիտի օգնէ մարդը քաղաքին», կ'ըսէ ան:

Գերմանիա այս տագնապները լուծելու միջոցներ չունի, բացի պետական պիւտճէները սահմանափակելէ եւ բարեկարգումներու ձեռնարկելէ:

«Գերմանիա իր կարողութեան սահմաններէն անդին գացած է երկար ժամանակէ ի վեր, կ'ըսէ արուեստներու եւ տնտեսութեան մասնագէտ մը: Համակարգը շատ փքած է: Չենք կրնար միայն արուեստներուն օժանդակել, պարզապէս որովհետեւ անոնք մաս կը կազմեն մեր աւանդութեան: Հովանաւորութեան նոր ձեւեր պէտք է գտնենք: Աւելի արմատական եւ ճկուն պէտք է ըլլալ: Ասիկա պետական պիւտճէն 1 կամ 2 առ հարիւրով կրճատելու հարցն է: Իրավիճակը պէտք է զի մագրուան թատրոններն ու թանգարանները: Դժուար ժամանակներ կ'ապրինք»:

Գերմանիա այս տագնապները լուծելու միջոցներ չունի, բացի պետական պիւտճէները սահմանափակելէ եւ բարեկարգումներու ձեռնարկելէ:

«Գերմանիա իր կարողութեան սահմաններէն անդին գացած է երկար ժամանակէ ի վեր, կ'ըսէ արուեստներու եւ տնտեսութեան մասնագէտ մը: Համակարգը շատ փքած է: Չենք կրնար միայն արուեստներուն օժանդակել, պարզապէս որովհետեւ անոնք մաս կը կազմեն մեր աւանդութեան: Հովանաւորութեան նոր ձեւեր պէտք է գտնենք: Աւելի արմատական եւ ճկուն պէտք է ըլլալ: Ասիկա պետական պիւտճէն 1 կամ 2 առ հարիւրով կրճատելու հարցն է: Իրավիճակը պէտք է զի մագրուան թատրոններն ու թանգարանները: Դժուար ժամանակներ կ'ապրինք»:

«Գերմանիա իր կարողութեան սահմաններէն անդին գացած է երկար ժամանակէ ի վեր, կ'ըսէ արուեստներու եւ տնտեսութեան մասնագէտ մը: Համակարգը շատ փքած է: Չենք կրնար միայն արուեստներուն օժանդակել, պարզապէս որովհետեւ անոնք մաս կը կազմեն մեր աւանդութեան: Հովանաւորութեան նոր ձեւեր պէտք է գտնենք: Աւելի արմատական եւ ճկուն պէտք է ըլլալ: Ասիկա պետական պիւտճէն 1 կամ 2 առ հարիւրով կրճատելու հարցն է: Իրավիճակը պէտք է զի մագրուան թատրոններն ու թանգարանները: Դժուար ժամանակներ կ'ապրինք»:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5516 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

11x11 grid with numbers 1-11 and alternating black and white squares.

- 1. Համայնագիտարան: 2. Ոճրագործ, մարդասպան: 3. Ափրիկէի «գոյնը» - Ծանրութեան միակտը - Դրկից տառեր: 4. Մանչ - Արսէն Երկաթի ծննդավայրը: 5. Ծանծաղուտ (Հակ.) - 6. Յարդանկողին - Եղանակաւորիչ մակրայ: 7. Իգալական «նա» - Սիւնաթիւնի ծննդավայրը - Կատաղի (Հակ.): 8. Զրային գագան - Արեւելեան տիտղոս: 9. Անգոր - Համադասական շողկապ: 10. Մա կազմել - Իտալիոյ քաղաքներէն: 11. Տառի մը դրացիները - Իգական անուն:

ԹԻՒ 5515 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ 11x11 grid with numbers 1-11 and black and white squares.

ՃԱՏՐԱԿ

Chess puzzle 1: ԾԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԸԱՐԺՈՒՄՈՎ

Chess puzzle 2: ՍՄԵՍՍՄՍՎԱՆ Ս.ՎԱՆ Ռ.

Chess puzzle 3: ԾԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԸԱՐԺՈՒՄՈՎ

Chess puzzle 4: ԺԱՅԱՌԱՐՏԵԱՆ ՈՒ. ՉԱՆՏՐԱՍԻՐԻ Թ.

Chess puzzle 5: ԾԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԸԱՐԺՈՒՄՈՎ

Chess puzzle 6: ՏԻԵԲԵՎԻՆ Վ.ՍԱՐԵՈՒՄ Ժ.

Chess puzzle 7: ԾԵՐՄԱԿՆԵՐԸ ԿԸ ՄԱՂԱՆ ԵՒ ՍԱԹ 2 ԸԱՐԺՈՒՄՈՎ

Chess puzzle 8: ՓԵԹՐՈՎԻՉ

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սինակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

ՏԻ՞ՆՆԻ Կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ

- ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) Եթէ ստիպուիք դրամ փոխ առնել, մտածեցէք նաեւ վճարման պայմանաժամին մասին, որպէսզի կարենաք դիւրութեամբ աւարտել վճարումը առանց վնասելու ձեր առօրեայ բնական ծախսերուն: 3ՈՒԻԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Եթէ կը գագթն կը գիտակցիք, թէ յանցանք մը գործած էք, ըսէք ձեր մեղան, ու ամենքը պիտի հիանան ձեզի եւ պիտի ներեն ձեզ: Յանցանքը ընդունելը վեհաճումն է: ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) Այսօր անորմադիր պիտի ըլլաք, արտօմակ չունիք աշխատելու, ուրեմն հանգստացէք, որպէսզի վերագտնէք աշխատելու ձեր կորուր: Օրը պարզ պիտի սնցնի: ԽՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) Ձեր գործերը լաւ կ'ընթանան, մի՛ աճապարէք, իրար մի՛ անցնիք, որովհետեւ անոնք կը յառաջդիմեն յաւ կշռոյթով: Օրուան ընթացքին ունիք բարի լուրեր: ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Գործի պիտի վերսկսիք արձակուրդի ձեր օրերէն ետք՝ վերջիշնով այն հաճելի օրերը, զորս ապրեցաք. որքա՛ն պիտի ուզէիք, որ երկարէին արձակուրդի օրերը: ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Օրը շատ յարմար է ճամբորդութեան համար, մանաւանդ եթէ նշանուած էք կամ ունիք սիրելի անձ մը, որուն հետ կ'ուզէք ճամբորդել անպայման: Երանելի է: ԿԻԿԻԻԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Բարեկամ մը նիւթական օգնութիւն պիտի ուզէ ձեզմէ, եւ դուք ստիպուած պիտի ըլլաք կատարելու անոր պահանջը: Միւս կողմէ, պիտի մտածէք նաեւ ձեր պիւտճէին մասին, որպէսզի ըլլայ բաւարար ձեր պետութիւնը: ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Որոշած էք ներողամտութեամբ մ'օտենալ եւ սպունգ քաշել այն հարցերուն վրայ, զորս ունեցած էք ձեր ընկերոջ հետ ձեր յարաբերութեան ընթացքին: Մանր-մունր հարցերը խնդիրի մի՛ վերածէք, խոհեմ եղէք սիրալիք մնալու համար: ԱՂԵՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Նախանձը շատ գէշ բերութիւն մըն է... Ձեր պաշտօնակիցներէն ոմանք ունին այս գէշ սովորութիւնը ձեր նկատմամբ: Կարեւորութիւն մի՛ տաք անոնց: ԱՅՅԵՆԶԻԻԻ (22 Դեկտեմբերէն 20 Նոյեմբեր) Ոմանք ձեզմէ պիտի պահանջեն փոխ գումար կամ այլ կարգի ծառայութիւն: Պիտի կատարէք այս պահանջը, որովհետեւ մերժելը ձեր բնատրութեան մէջ չկայ: ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար) Կ'ուզէք ամեն բան ընել դուք ձեզ փոխադրելու համար բոլորովին տաքբեր տեղ մը առանձնախալու համար: Երաշխիք փափաք է, թէ լուրջ ծրագիր. ո՛վ գիտէ... 2ՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ոչ մէկ պատճառ ունիք մերժելու փոքր տեղափոխութիւն մը ձեր գործին բերումով: Մտու լաւ պիտի անցնի այս փոփոխութիւնը եւ նոյնիսկ ժամանակ պիտի ունենաք այցելելու այդ շրջանի տեսարժան վայրերը:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՆ / ՅՈՒՅՆՎԱՆԴԵՍ / ԵՐԳԱՀԱՆԴԵՍ

ԿԻԹԱՌԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԱՐՊԵՏՆԵՐԸՆ ԺԱՆ-ՓՕԼ ՊՈՒՐԵԼԼԻԻ ԵՒ ԻՐ ԵՌԵԱԿԻՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ

Թէեւ ամրան ամիսներուն յարաբերաբար կը նուազի գիշերային վրասավայրերու մէջ հիւրաբար էլոյթ ունեցող օտար արուեստագէտներուն թիւը, սակայն պէտք է ըսել, որ անոնք կը յաջողին որոշ չափով գոհացրնել արդի երաժշտութիւն ունեցող փափաքողները: Այս առումով վերջին շրջանին մեծ աշխուժութիւն կը ցուցաբերէ Պի.Օ.18 գիշերային վրասավայրը, որ այլ վայրերու նման սկսած է յաճախակի ձեռնարկներ կատարել ամերիկեան եւ եւրոպական երգարուեստի ասպարէզի մէջ յաջողութիւն գտած եւ իրենց անուն ապահոված արուեստագէտներ: Այս ծիրին մէջ 18-21 Օգոստոսին Պի.Օ.18 գիշերային վրասավայրին մէջ էլոյթ պիտի ունենայ Ժան-Փոլ Պուրելլի



Ժան-Փոլ Պուրելլի

Երաժշտական եռեակը, որ կը մատուցէ ֆիլիժըն, ձեւ, ֆանք, ռոք եւ սիմֆոնիկա երաժշտութիւն: Կիթառահար եւ երգիչ Ժան-Փոլ Պուրելլիի խումբին մաս կը կազմեն էլեկտրական պաս եւ թմբուկ նուագող արուեստագէտներ: Նշենք, որ եռեակին այս էլոյթները, ինչպէս վերջին շրջանի անոր էլոյթներուն մեծամասնութիւնը, ձուլուած են անսպասելի փոփոխութիւններով: Ժան-Փոլ Պուրելլիի երաժշտական յօրինումները ամփոփուած են վերջերս հրատարակուած «Մմանտիա» ձայնասկիւնի մէջ:

Իր քիւի եւ Պլատ Ալմըրի հետ: Ան ուր 1970 սկսած թուականներէն սկսած երաժշտական ասպարէզը պիտի հանդէս բերած է իբրեւ ժամանակակից լատինական կիթառային մէկը: Արուեստագէտը եւ իր խումբը շրջապատուած են այցելուներով: Ան շուրջ տարի մը առաջ էլոյթ ունեցած է «Պրու Սօք Քաֆէ» գիշերային վրասավայրին մէջ: Արուեստագէտը եւ իր խումբը շրջապատուած են այցելուներով: Ժան-Փոլ Պուրելլիի երաժշտական յօրինումները ամփոփուած են վերջերս հրատարակուած «Մմանտիա» ձայնասկիւնի մէջ:

ԱՅՍՕՐ ԿԵՆՏՐՈՆԻՑ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2003 ՊԵՏՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ 26.7°C ԳԻՇԵՐ՝ 24°C ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 65%

ԱԶԳԱԿ 50 ՏԵՄԲԻ ԵՄԵՆԱԶ 18 Օգոստոս 1953

ԱՊՏԱԼԼԱ ՀԱԺԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՄԲՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ Է

ԱՊՏԱԼԼԱ ՀԱԺԻ ՊԱՐԱԳԱՆ Ծատ մը բերքեր կը գրադին Ապտալա Հաժի խնդրով: «ՌԱՌԻԱՏ»-ի եւ «ԱՀՐԱՐ»-ի խմբագիրները կը բնագոյնէն Պէյրութի երեսփոխանին վարմունքը՝ գարմանալով, որ քաջութիւնը ունեցած է ժողովուրդը անհնազանդութեան մղելու եւ հարցաքննիչ դատարանի չհրկայանալու: «ՌԱՌԻԱՏ» խստութեամբ կը պարսաւէ Ապտալա Հաժը եւ կը յայտարարէ, թէ կառավարութեան պարտականութիւնը իրեն կը հրահանգէ վերջ գնելու քաղաքակցական բոլոր արարքներուն, որոնք կը կատարուին յիշեալ ամբողջ վարին կողմէ: Միւս կողմէ, «ԱՀՐԱՐ» կը խորհի, թէ անհրաժեշտ է իւրաքանչիւր անձի ազատութիւնը յարգել, բայց հարկ է զանազան վաճառութեան եւ արտօնութեան միջեւ: Չենք կրնար ընդունիլ, որ Ապտալա Հաժի ժողովրդականութիւնը հիմնէ ամբողջապարտութեան վրայ, որ կը միտի պետութեան իշխանութիւնը վարկաբեկելու: ՀԱՅԱԹ՝ կը խորհի, թէ երկու օրէն Ապտալա Հաժի խնդիրը կը վերջանայ: Արդարեւ, կ'ըսէ ան, իշխանութիւնները բացարձակապէս գիտեն, թէ ուր կը գտնուի, բայց իրականութեան մէջ չեն փափաքիր գիցը հետապնդել, միայն կը գոհանան իր բնակարանին շուրջ փնտրուողները կատարելով: (ՀԱՏՈՒԱԾ)

ԱՅՍՕՐ՝ 18 ՕԳՈՍՏՈՍԻՆ 1887 - Սահ Գրիգոր Օտեանի, Ազգ. Սահմանադրութեան հեղինակներէն: 1990 - Սահ Զաւարչ Թորիկեանի:

